«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 23/02

ք. Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 14.08.2018թ. ժամը 15:00

Համաձայն 23.07.2018թ. թիվ 84 դիմումով և ՀՀ Արդարադատության նախարարություն հացեագրված,07.08.2018թ-ին վերահասցեյագրված ու «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 09.08.2018թ-ին ստացված,«ՎՏԲ-Հայաստան Բանկ»ՓԲԸ-ի ներկայացուցիչ Գագիկ Գրիգորյանի դիմումների հիմքով,«Էյ Ջի Դիվելըփմենթ»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Կարեն Ասատրյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում նշված փաստական հանգամանքների քննության համար՝ ս/թ-ի Օգոստոս-14-ին ժամը 15.00-ին՝ հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Դիմումատու «ՎՏԲ-Հայաստան Բանկ»ՓԲԸ-ի ներկայացուցիչ Գագիկ Գրիգորյանը
«Էյ Ջի Դիվելըփմենթ»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Կարեն Ասատրյանը

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձանաժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Դիմումատու «ՎՏԲ-Հայաստան Բանկ»ՓԲԸ-ի ներկայացուցիչ Գագիկ Գրիգորյանը
«Էյ Ջի Դիվելըփմենթ»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Կարեն Ասատրյանը
ծանուցվել էր նիստի մասին,գրավոր պատասխան էր ներկայացրել, սակայն նիստին չէր ներկայացել:

Հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանը առաջարկեց հայտնել կարծիքներ առանց սնանկության գործով կառավարիչ՝Կարեն Ասատրյանի ներկայության կարգապահակա հանձնաժողովի նիստը սկսելու վերաբերյալ:

հանձնաժողովի անդամ՝Ռուբեն Խալաթյանը հայտնեց այն կարծիքը որ սնանկության գործով կառավարիչը տեղեկացված է դիմումի,նշանակված հանձնաժողովի նիստի մասին և ներկայացրել է գրավոր պատասխան և կից փաստաթղթեր,որը իր կարծիքով պետք է օգնի հանձնաժողովի անդամներին ամբողջական քննարկումներ կազմակերպել և գալ եզրակացության,ուստի կարելի է նիստը անցկացնել «Էյ Ջի Դիվելըփմենթ»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Կարեն Ասատրյանի բացակայությամբ:

Հանձնաժողովի մնացած անդամները համաձայնեցին փաստարկին և առաջարկին:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը կարգապահական հանձնաժողովի նիստը հայտարարեց բացված:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝
23.07.2018թ. թիվ 84 դիմումով և ՀՀ Արդարադատության նախարարություն հացեագրված, 07.08.2018թ-ին վերահասցեյագրված ու «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 09.08.2018թ-ին ստացված,«ՎՏԲ-Հայաստան Բանկ»ՓԲԸ-ի ներկայացուցիչ Գագիկ Գրիգորյանի դիմումների հիմքով,«Էյ Ջի

Դիվելըփմենք»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Կարեն Ասատրյանի գործողություն-ների/անգործության/ փաստերի նկատմամբ վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, դիմումներում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ՝

Կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝ Տիգրան Հարությունյանը ներկայացրեց, «ՎՏԲ Հայաստան Բանկ»ՓԲԸ-ի ներկայացուցիչ Գագիկ Գրիգորյանի դիմումները և կից փաստաթղթերը:

Նախագահողն խնդրեց հանձնաժողովի անդամներին քննարկել կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

Հանձնաժողովի անդամ Հենրիկ Մարտիկյանը ձայն խնդրեց և հայտնեց այն կարծիքը,որ ըստ էության դիմումները նույնաբովանդակ են և նշված հանգամանքները քննելու և եզրակացության գալու համար անհրաժեշտ է հարուցել կարգապահական վարույթ,որպեսզի հանգամանալից պարզաբանվի բոլոր հանգամանքները:

Հանձնաժողովի մյուս անդամները համաձայնեցին առաջարկի հետ:

Հանձնաժողովի նախահն առաջարկը դրեց քվեարկության:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 5

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ – 23.07.2018թ. թիվ 84 դիմումով և ՀՀ Արդարադատության նախարարություն հացեագրված, 07.08.2018թ-ին վերահասցեյագրված ու «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 09.08.2018թ-ին ստացված,«ՎՏԲ-Հայաստան Բանկ»ՓԲԸ-ի ներկայացուցիչ Գագիկ Գրիգորյանի դիմումների հիմքով,«Էյ Ջի Դիվելըփմենք»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Կարեն Ասատրյանի գործողությունների /անգործության/, դիմումներմում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ եզրակացության գալու համար հարուցել կարգապահական վարույթ:

ԼՍԵՑԻՆ – Հանձնաժողովում նախագահող՝Տիգրան Հարությունյանին,ով առաջարկեց աշխատանքային հետևյալ կարգը՝

լսել բողոքաբերին և ուսումնասիրել ներկայացված պատասխանը և փաստաթղթերը

Հանձնաժողովի անդամները և պարտատիրոջ ներկայացուցիչը աշխատանքային կարգին:

Համաձայն աշխատանքային կարգի Հանձնաժողովի Նախագահը ձայնի իրավունք տվեց՝ բողոքաբեր՝«ՎՏԲ-Հայաստան Բանկ»ՓԲԸ-ի ներկայացուցիչ Գագիկ Գրիգորյանին,նշելով որ բողոքաբերը իր ելույթում շեշտադրումը դնի սնանկության գործով կառավարչի գործողություն-ների կամ անգործության վրա:

Դիմումատուն նշեց որ իր դիմում-բողոքը ուղղված է կառավարչի կողմից իր լիազորությունների ոչ պատշաճ կատարմանը: Մասնավորապես նշեց,որ «Էյ Ջի Դիվելըփմենք»ՓԲԸ-ի սնանկությաև գործով կառավարիչ՝ Կարեն Ասատրյանը իր գործողություններով այդ թվում վիճարկումներով, գրություններով գործում է ի շահ պարտապանի և ի վնաս պարտատիրոջը,քանի որ պարտատերը չի կարողանում ԴԱՀԿԾ-ի միջոցով իրացնել գույքը և ստանալ իր պահանջի բավարարում:

Հանձնաժողովի անդամ Արմենակ Ադամյանը հարց ուղղեց դիմումատուի ներկայացուցչին առ այն թե իր կարծիքով ինչումն է սնանկության գործով կառավարչի առարկությունների հիմքը:

Դիմումատուն պատասխանեց,որ ինչպես դիմում է նշված կառավարիչը կարծում է,որ իրացվող գույքորից 1-ը պակաս է իրացման դրվել 1000քմ-ով:

Հանձնաժողովի նախահ՝Տ.Հարությունյանը հայտնեց,որ կառավաիչը իր առարկություններում նույնպես առնծածում է այդ փաստը,որի հիմքով էլ դիմել է ԴԱՀԿԾ Գլխավոր հարկադիր կատարողին,որի հիմքով էլ դադարեցվել են հարկադիր աճուրդները,բայց իր ներկայացրած

առարկությունից և ներկայացրած փաստաթղթերից պարզաբանել հնարավոր չի թե այդ պակաս 1000 քմ-ը,ինչ կարգով է հայտնաբերվել և ինչպես է հիմնավորվում:

Հանձնաժողովի անդամ Արմենակ Աղամյանը առաջարկեց հարուցել կարգապահական վարույթի քննությունը հետաձգել,քան որ «Էյ Ջի Դիվելըփմենթ»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Կարեն Ասատրյանի բացակայության պայմաններում չպարզաբանվեց կարևոր հիմք հանդիսացող տեղեկատվության աղբյուրը, որը հիմք է հանդիսացել կառավրչի կողմից գույքի վերաբերյալ գործողությունների կատարման անհրաժեշտության համար, հետաձգել նիստը մեկ այլ հերթի՝ սնանկության գործով կառավարչի ներկայությունը ապահովելու համար:

Հանձնաժողովի անդամները քննարկեցին առաջարկը և համաձայնելով քվեարկեցին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 5

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1.Հարուցել կարգապահական վարույթ:

2. 23.07.2018թ. գրությամբ՝ ՀՀ արդարադատության նախարարություն հացեագրված և «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 03.08.2018թ-ին ստացված,«ՎՏԲ-Հայաստան Բանկ»ՓԲԸ-ի ներկայացուցիչ Գագիկ Գրիգորյանի դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, «Էյ Ջի Դիվելըփմենթ» ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Կարեն Ասատրյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթի քննությունը հետաձգել և նշանակել 30.08.2018թ-ին ժամը 15.00-ին, ք.Երևան,Արշակունյաց 5, 417 սենյակ,հասցեում:

3.Հանձնաժողովի քարտուղարին ապահովել կողմերին պատշաճ ծանուցում, հանձնաժողովի նիստի վայրի և ժամի մասին:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Աղամյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Գևորգյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝ Մ.Մարտիկյան